

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Առաջին
Չատիկը



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest
Alastair Paterson

Adapted by: Lyn Doerksen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org


©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Կին մը կեցած էր
աղմուկոտ լերան
լանջին, անոր աչքերը
տիրութեամբ կը
նայէին սարսափելի
տեսարանի մը:
Անոր տղան կը
մեռներ: Մայրը
Մարիամն էր, ան
կեցած էր այն
վայրին մօտ,
ուր Յիսուս
գամուած
էր խաչին:





Ինչպե՞ս այս բոլորը եղաւ:
Ի՞նչպէս կրնայ Յիսուս
այնչափ աղուոր կեանքի
մը վերջ տայ այս տխուր
եւ սարսափելի
ձեւով: Ի՞նչպէս
Աստուած
կ'արտօնէ,
որ իր որդին
գամուկի խաչին վրայ
եւ հոն վախճանի:
Արդեօ՞ք Յիսուս սխալած
է իր ինքնուրթեան:
Արդեօք Աստուած
ձախողեցաւ:





Ո՛չ: Աստուած
չձախողեցաւ: Յիսուս
որեւէ սխալ չգործեց:
Յիսուս արդէն իսկ
գիտեր, որ ան մահուան
պիտի ենթարկուի
գէշ մարդոց ձեռքով:
Նոյնիսկ երբ Յիսուս
տակաւին նորածին էր
ծեր մարդ մը, որ
Սիմիէոն կը կոչուէր,
ըսած էր Մարիամին,
որ դժբախտութիւն
կը սպասէր:




Յիսուսի
մահուընէ
քանի մը օր
առաջ տիկին մը
կու գայ եւ անոր
ոտքերուն անուշահոտ
կը թափէ: "Ան դրամ կը
վատներ" աշակերտները
կը գանգատէին:
"Ան շատ լաւ գործ
ըրաւ", կ'ըսէ Յիսուս.
"Ան ըրաւ այդ բոլորը
իմ թաղմանս համար":
Ինչ տարօրինակ բառեր:




Ասկէ ետք, Յուդա,
Յիսուսի տասներկու
աշակերտներէն մին,
համաձայնեցաւ մատնել
Յիսուսի եւ անոր յանձնել
քահանայապետին
երեսուն հատ
արծաթ ոսկիի
համար:






Յրեական Չատիկ
տօնին, Յիսուս իր վերջին ճաշը
կերաւ իր աշակերտներուն հետ:
Անոնց սքանչելի բաներ պատմեց
Աստուծոյ եւ իր խոստումներուն,
անոնց որ իրեն կը սիրեն: Ատկէ
ետք Յիսուս առաւ հացը եւ
գաւաթը ու բաժնեց անոնց:
Այս բոլորը, որ յիշեցնեն
իրենց, թէ
Յիսուսի
մարմինն ու
արիւնն են, որ կը
տրուին, որպէսզի
մեղքերը ներուին:



Յետոյ Յիսուս ըսաւ իր բարեկամներուն, որ ինք պիտի դաւաճանուի եւ իրենք պիտի փախչին: "Ես չեմ փախչիր" ըսաւ Պետրոս: "Առաջ որ աքլորը (աքաղաղը) աղաղակէ, դուն ինծի պիտի դրժես երեք անգամ", ըսաւ Յիսուս:





Այդ օրուան ուշ գիշերին
Յիսուս գնաց աղօթելու
Գեթսեմանի պարտեզին
մէջ: Աշակերտները,
որոնք հետն էին
բոլորն ալ քնացան:
"Օ, իմ հայրս" Յիսուս
աղօթեց, "հեռացուր
ինձմէ այս գաւաթը,
սակայն ոչ թէ ինչպէս որ
ես կ'ուզեմ, այլ ինչպէս
որ դուն կ'ուզես":



Յանկարծ խուժան մը քալեց
դէպի պարտեզ Յուդային
առաջնորդութեամբ: Յիսուս
երբեք դիմադրութիւն չըրաւ,
սակայն Peterը մարդու
մը ականջը կտրեց:
Անձայն, Յիսուս դպաւ
մարդուն ականջին եւ
բուժեց զայն: Յիսուս
գիտեր, որ նորէն
ձերբակալուիլը
Աստուծոյ կամքով
է, որ կ'ըլլար:




Ժողվը տարաւ Յիսուսը քահանայապետին տունը:
Հոն հրեայ մեծաւորները ըսին, որ Յիսուս
պետք է մեռնի: Մօտը
Պետրոս կեցած էր
ծառաներուն
կրակին մօտ եւ
կը դիտէր:



Երեք անգամ ժողովուրդը նայեցան Պետրոսին եւ
ըսին. "Դուն Յիսուսի հետ էիր" Երեք անգամ ալ
Պետրոս դժեց այդ իրականութիւնը, ինչպէս


որ Յիսուս ըսած էր, որ
պիտի ըլլայ: Մինչեւ
իսկ Պետրոս անիծեց
եւ սուտ երդում ըրաւ:






Ատկէ ետք արևորը
աղաղակեց: Կարծես թէ
այդ Աստուծոյ ձայնն էր
Պետրոսի համար: Յիշելով
Յիսուսի բառերը Պետրոս
ծանրորէն լացաւ:





Յուդան ալ զղշաց: Ան գիտեր,
որ Յիսուս որեւէ մեղք կամ ոճիր
չէ գործած: Յուդան առաւ
30 արծաթէ դրամները
եւ ետ դարձուց, սակայն
քահանաները
մերժեցին ետ
առնել:





Յուղա թափեց
դրամը, գնաց եւ
ինքզինք կախեց:






Քահանաները Յիսուսը
բերին Պիղատոսին, հռոմեացի
կառավարիչին: Pilate ըսավ.

"Ես որեւէ մէկ սխալ չեմ
գտներ այս մարդուն
մէջ", սակայն ժողովը
շարունակեց ճշաւ
"Խաչեցէք իրեն,
խաչեցէք իրեն":



Վերջապես Պիղատոս տեղի տուաւ
եւ Յիսուսը խաչի վրայ մահուան
դատապարտեց: Չինուորները կը
զարնէին Յիսուսին եւ կը թքնէին
անոր երեսին եւ վրան կը խնդային:
Փուշերով թագ մը շինեցին եւ անոր
գլխուն վրայ հրեցին: Յետոյ Անոր
քամեցին տախտակէ խաչի
մը վրայ, որպէսզի մեռնի:



Սկիզբէն Յիսուս արդէն գիտէր, որ ինք այդ ձեւով է,
որ պիտի մեռնի: Ան նաեւ գիտէր, որ իր մահը
ներում պիտի բերէր բոլոր մեղք գործողներուն,
որոնք իրենց վատահուրթիւնը

կը դնէին իր վրայ: Երկու
ոճրագործներ ալ Յիսուսի

կողքին խաչուած էին:

Անոնցմէ մէկը հաւատաց

Յիսուսի եւ դրախտ

բարձրացաւ: Միւսը

չհաւատաց Ասոր:



Չարչարանքէն ժամեր
ետք Յիսուս ըսաւ. "Այլեւս
վերջացաւ" եւ մեռաւ: Իր
գործը կատարուած
էր: Բարեկամները
Յիսուսը թաղեցին
անձնական
գերեզմանի
մէջ:



Յոռմեացի զինուորները
կղպեցին եւ հսկեցին
եւ գերեզմանը: Յիմա
որեւէ մէկը չի կրնար
ոչ ներս եւ ոչ ալ
դուրս գայ այդ
տեղէն:



Եթե այս ըլլար պատմութեան
վերջը, ինչ տիտուր պիտի
ըլլար: Սակայն
Աստուած հրաշալի
բան մը ըրաւ:
Յիսուս մեռած
չի մնաց:



Առտու կանուխ շաբթուան
առաջին օրը Յիսուսի
աշակերտներէն մի
քանին տեսան, որ
Ժայռը գլորուէր Էր
դամբարանին
առջեւէն: Երբ
դէպի ներս
նայեցան
տեսան,

որ Յիսուս
հոն չէ:



Կին մը մնաց գերեզմանին մեջ, որ
սաստիկ կու լար: Յիսուս երեւցաւ
անոր: Ան ուրախութեամբ
վազեց, որպէսզի պատմէ
աշակերտներուն: "Յիսուս
ողջ է, Յիսուս ետ եկաւ
մեռելներէն":



Շատ շուտ Յիսուս եկավ իր
աշակերտներուն եւ անոնց ցոյց
տուաւ իր գամուած ձեռքերուն վերքերը,
իրականութիւն էր: Յիսուս ողջ էր: Ան
ներեց Peterին, որ զինք դրժեր էր, եւ ըսաւ,
որ լուրը տարածեն բոլորին: Ատկէ ետք Ան
իր ողջ ըլլալուն երկինք բարձրացաւ, ուրկէ
որ եկած էր առաջին կաղանդին:



Առաջին Չատիկը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ իրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 26-28, Ղուկաս 22-24,
Յովհաննէս 13-21

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

